17735

ՌԽՔՍԱՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

324
Ռ2-11

«ԲՈԼՇԵՎԻԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ—1938

15 JAN 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

26 SEP 2006

ՌԽՓԱՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՌՈՍՏՈՎԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ
«ԲՈԼՇԵՎԻԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ — 1938

24 JUL 2013

17735

ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ XVI ԳՈՒՄԱՐՄԱՆ IV՝ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

«ՌԽՖՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ» ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեն վորոշում է՝

Հաստատել «Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության ընտրությունների Կանոնադրությունը»։

Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

Ի տեղի Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի քարտուղարի՝ Համառուսական Կենտգործկոմի Նախագահության անդամ՝ Ա. ԱՐՏՅՈՒԽԻՆԱ.

Մոսկվա, Կրեմլ
16 փետրվարի
1938 թ.

3506
41

ԳԼՈՒԽ I

ԸՆՏՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԸ

ՀՈԴՎԱԾ 1. ՌԽՖՍՀ Սահմանադրության 138-րդ հոդվածի հիման վրա ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորների ընտրությունները ընտրողների կողմից կատարվում են ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ։

ՀՈԴՎԱԾ 2. ՌԽՖՍՀ Սահմանադրության 139-րդ հոդվածի հիման վրա պատգամավորների ընտրությունները ընդհանուր են. ՌԽՖՍՀ բոլոր քաղաքացիները, վորոնց 18 տարին լրացել է, անկախ ռասայական և ազգային պատկանելությունից, դավանանքից, կրթական ցենզից, նստակեցությունից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից և անցյալ գործունեությունից, իրավունք ունեն մասնակցելու պատգամավորների ընտրություններին և ընտրվելու ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի մեջ, բացառությամբ խելագարների և այն անձանց, վորոնք դատարանով դատապարտված են ընտրական իրավունքների զրկման։

ՀՈԴՎԱԾ 3. ՌԽՖՍՀ Սահմանադրության 140-րդ հոդվածի հիման վրա պատգամավորների ընտրությունները հավասար են. յուրաքանչյուր քաղաքացի ունի մեկ ձայն. բոլոր քաղաքացիներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով։

ՀՈԴՎԱԾ 4. ՌԽՖՍՀ Սահմանադրության 141-րդ հոդվածի հիման վրա կանայք տղամարդկանց հետ հավասարապես ոգտվում են ընտրելու և ընտրվելու իրավունքով։

ՀՈԴՎԱԾ 5. ՌԽՖՍՀ Սահմանադրության 142-րդ հոդվածի հիման վրա Կարմիր Բանակի շարքերում գտնվող քաղաքացիները բոլոր քաղաքացիների հետ հավասարապես ոգտվում են ընտրելու և ընտրվելու իրավունքով։

ՀՈԴՎԱԾ 6. ՌԽՑՍՀ Սահմանադրության 146-րդ հոդվածի հիման վրա ընտրությունների ժամանակ թեկնածուներն առաջադրվում են ըստ ընտրական ոկրուգների։

ԳԼՈՒԽ II

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 7. Ընտրողների ցուցակները քաղաքներում կազմում է աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհուրդը, իսկ ռայոնների բաժանված քաղաքներում — ռայոնական Խորհուրդը։ Գյուղական վայրերում — աշխատավորների պատգամավորների գյուղական (ստանիցայի, գյուղի, խուտորի, առվի) Խորհուրդը։

ՀՈԴՎԱԾ 8. Ընտրողների ցուցակների մեջ մտցվում են ընտրությունների որը 18 տարին լրացրած այն բոլոր քաղաքացիները, վորոնք ունեն ընտրական իրավունք և ցուցակները կազմելու մոմենտին բնակվում են (մշտապես կամ ժամանակավորապես) տվյալ Խորհրդի տերիտորիայում։

ՀՈԴՎԱԾ 9. Ընտրողների ցուցակների մեջ չեն մտցվում այն անձինք, վորոնք դատավճիռներով զրկված են ընտրական իրավունքներից՝ դատավճռով սահմանած ընտրական իրավունքներից զրկելու ամբողջ ժամանակամիջոցում, ինչպես նաև այն անձինք, վորոնք որենքով սահմանված կարգով ճանաչված են խելագար։

ՀՈԴՎԱԾ 10. Ընտրողների ցուցակները կազմվում են ըստ յուրաքանչյուր ընտրական շրջանի այբուբենական կարգի, ցույց տալով ընտրողի ազգանունը, անունը, հայրանունը, տարիքն ու բնակավայրը, և ստորագրվում են աշխատավորների պատգամավորների Խորհրդի նախագահի ու քարտուղարի կողմից։

ՀՈԴՎԱԾ 11. Ընտրողներից վոչվոք չի կարող մտցվել ավելի, քան մեկ ընտրական ցուցակի մեջ։

ՀՈԴՎԱԾ 12. Զինվորական մասերում և զինվորական միավորումներում յեղած ընտրողների ցուցակները կազմում է հրամանատարությունը՝ հրամանատարի և զինվորական կոմիսարի ստորագրություններով։ Մյուս բոլոր զինվորական ծառայողներն ընտրողների ցուցակներն են մտցվում ըստ բնակավայրի՝ աշխատավորների պատգամավորների համապատասխան Խորհուրդների կողմից։

ՀՈԴՎԱԾ 13. Հիվանդանոցներին, ծննդյան տներին, սանատորիաներին և ուրիշ բուժական հիմնարկություններին կից ստեղծվող ընտրական շրջանների ընտրողների ցուցակները կազմվում են ինչպես հիվանդ քաղաքացիների, այնպես և ընտրությունների որը հերթապահություն անող բժշկական անձնակազմի համար։

Ընտրություններին չեն կարող մասնակցել քութեջային և դիֆտերիտային բաժանմունքներում գտնվող հիվանդները։

ՀՈԴՎԱԾ 14. Ընտրություններից 30 որ առաջ աշխատավորների պատգամավորների Խորհուրդը կախում է ընտրողների ցուցակներն՝ ի տես ընդհանուրի կամ ընտրողների համար հնարավորություն է ապահովում այդ ցուցակների հետ ծանոթանալու Խորհրդի շենքում։

ՀՈԴՎԱԾ 15. Ընտրողների ցուցակների ընագիրը պահվում է համապատասխանորեն աշխատավորների պատգամավորների Խորհրդում և զինվորական մասում կամ զինվորական միավորման մեջ։

ՀՈԴՎԱԾ 16. Այն դեպքում, յերբ ընտրողն իր բնակավայրը փոխում է ընտրողների ցուցակի հրապարակման և ընտրությունների որվա միջև ընկած ժամանակամիջոցում, աշխատավորների պատգամավորների համապատասխան Խորհուրդը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ձևով նրան տալիս է «քվեարկման իրավունքի վկայական» և ընտրողների ցուցակում նշում է՝ «մեկնեց». Նոր բնակության կետում—մշտական կամ ժամանակավոր —ընտրողը մտցվում է ընտրողների ցուցակը՝ ներկայացնելով ինքնության վկայական, ինչպես նաև «քվեարկման իրավունքի վկայական»։

ՀՈԴՎԱԾ 17. Ընտրողների ցուցակում յեղած անճշտության վերաբերյալ դիմումը (ցուցակների մեջ չմտցնելը, ցուցակներից հանելը, ազգանվան, անվան և հայրան-

վան աղավաղումը, ընտրական իրավունքներից զրկվածնե-
ին սխալ կերպով ցուցակների մեջ մտցնելը) տրվում է
աշխատավորների պատգամավորների այն Խորհրդին, որը
հրապարակել է ցուցակը։

ՀՈԴՎԱԾ 18. Աշխատավորների պատգամավորների Խոր-
հրդի գործադիր կոմիտեն պարտավոր է յերեք որվա ժամ-
կետում քննարկել ընտրողների ցուցակում յեղած անճշ-
տության վերաբերյալ յուրաքանչյուր դիմում։

ՀՈԴՎԱԾ 19. Ընտրողների ցուցակում յեղած անճշտու-
թյան վերաբերյալ դիմումը քննարկելուց հետո, աշխատա-
վորների պատգամավորների Խորհրդի գործադիր կոմիտեն
պարտավոր է կամ անհրաժեշտ ուղղումներ մտցնել ընտ-
րողների ցուցակում, կամ դիմողին տալ գրավոր տեղե-
կանք՝ նրա դիմումը մերժելու պատճառաբանությունների
մասին։ աշխատավորների պատգամավորների Խորհրդի վո-
ճրոշման հետ համաձայն չլինելու դեպքում դիմողը կարող
է գանգատ տալ ժողովրդական դատարանին։

ՀՈԴՎԱԾ 20. Ժողովրդական դատարանը յերեք որվա
ընթացքում պարտավոր է դատական դռնբաց նիստում,
հրավիրելով դիմողին և Խորհրդի ներկայացուցչին, քննար-
կել ցուցակում յեղած անճշտության վերաբերյալ գանգա-
տը և իր վճիռն անհապաղ հաղորդել ինչպես դիմողին, այն-
պես էլ Խորհրդին։ Ժողովրդական դատարանի վճիռը վերջ-
նական է։

ԳԼՈՒԽ III

ՌԽՖՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՈԿՐՈՒԳՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 21. ՌԽՖՍՀ Սահմանադրության 25-րդ հոդ-
վածի հիման վրա ՌԽՖՍՀ Գերագույն Խորհուրդն ընտրվում
է ՌԽՖՍՀ քաղաքացիների կողմից, ըստ ընտրական ոկ-
րուգների։

ՀՈԴՎԱԾ 22. ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրություն-
ների ընտրական ոկրուգը կազմվում է՝ ոկրուգին 150.000
բնակիչ սկզբունքով։ ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրու-

թյունների յուրաքանչյուր ընտրական ոկրուգ ուղարկում
է մեկ պատգամավոր։

ՀՈԴՎԱԾ 23. ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրու-
թյունների ընտրական ոկրուգները կազմվում են ՌԽՖՍՀ
Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից։

ՀՈԴՎԱԾ 24. ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրու-
թյունների ընտրական ոկրուգների ցուցակը հրապարակում
է ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությունը՝ միա-
ժամանակ նշանակելով ընտրությունների որը։

ԳԼՈՒԽ IV

ԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 25. Ընտրական բյուլետեններն ընդունելու և
ձայները հաշվելու համար, ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի
ընտրությունների ընտրական ոկրուգների մեջ մտնող քա-
ղաքների և ռայոնների տերիտորիան բաժանվում է ընտ-
րական շրջանների։

ՀՈԴՎԱԾ 26. Ընտրական շրջանները կազմվում են քա-
ղաքներում՝ աշխատավորների պատգամավորների քաղա-
քային Խորհուրդների կողմից, ռայոնների բաժանված քա-
ղաքներում՝ աշխատավորների պատգամավորների ռայոնա-
կան Խորհուրդների կողմից, գյուղական վայրերում՝ աշխա-
տավորների պատգամավորների ռայոնական Խորհուրդների
կողմից։

ՀՈԴՎԱԾ 27. Ընտրական շրջանները կազմվում են վոչ
ուշ, քան ընտրություններից 45 որ առաջ։

ՀՈԴՎԱԾ 28. Այն գյուղխորհրդի տերիտորիան, վորտեղ
բնակիչների թիվը յերկու հազարից ավելի չէ, կազմում է,
վորպես կանոն, մեկ ընտրական շրջան. յուրաքանչյուր
ստանիցայում, գյուղում, աուլում, վորոնք ունեն 500-ից
մինչև վոչ ավելի քան 2000 բնակիչ, կազմակերպվում է
առանձին ընտրական շրջան։

Այն գյուղերում կամ մի խումբ գյուղերում, վորոնք
ունեն 500 մարդուց պակաս, բայց վոչ պակաս, քան 300
մարդ, այն դեպքերում, յերբ այդպիսի գյուղերի հեռավո-

բությունն ընտրական շրջանի կենտրոնից 10 կիլոմետրից ավել է, կարելի է կազմակերպել առանձին ընտրական շրջաններ։

ՀՈԴՎԱԾ 29. Հյուսիսային և արևելյան հեռավոր առանձին ռայոններում, վորտեղ գերակշռում են մանր բնակավայրերը, թույլ է տրվում կազմակերպել ընտրական շրջաններ՝ վոչ պակաս, քան 100 մարդ բնակչությամբ։

Հյուսիսի ազգային ոկրուգների համար, նաև լեռնային և քոչվորական ռայոնների համար ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության թույլտվությամբ թույլ է տրվում կազմակերպել ընտրական շրջան 100 մարդուց պակաս բնակչություն լինելու դեպքում, սակայն վոչ պակաս, քան 50 մարդ։

ՀՈԴՎԱԾ 30. Այն քաղաքները, բանվորական ավաններն, ինչպես նաև գյուղերն ու գյուղխորհրդի տերիտորիան, վորտեղ բնակիչների թիվը 2000-ից ավելի է, բաժանվում են ընտրական շրջանների՝ մի ընտրական շրջանին 1.500—2.500 բնակիչների հաշվով։

ՀՈԴՎԱԾ 31. Զինվորական մասերը և զինվորական միավորումները կազմում են առանձին ընտրական շրջաններ վոչ պակաս, քան 50 և վոչ ավելի, քան 1.500 ընտրողներով, վորոնք մտնում են ընտրական ոկրուգի մեջ ըստ այն վայրի, վորտեղ գտնվում է զորամասը կամ զինվորական միավորումը։

ՀՈԴՎԱԾ 32. Վոչ պակաս, քան 50 ընտրող ունեցող հիվանդանոցներին, ծննդատներին, սանատորիաներին, հաշմանդամների տներին կից ստեղծվում են առանձին ընտրական շրջաններ։

Մի քանի շենքեր ունեցող հիվանդանոցներում թույլ է տրվում առանձին շենքերում կազմակերպել ընտրական շրջաններ այն դեպքում, երբ նրանցից յուրաքանչյուրում կան վոչ պակաս, քան 50 ընտրող։

Այն հիվանդանոցներում և մյուս բուժական հիմնարկություններում, վորտեղ առանձին ընտրական շրջաններ չեն կազմակերպվում, թույլ է տրվում ընդունել ընտրական բյուլետենները հենց հիվանդանոցներում և բուժական

հիմնարկություններում ընտրական հանձնաժողովներից հատկացրած անդամների կողմից։ Այդ դեպքերում հիվանդանոցներին տալիս են առանձին ընտրական արկղներ։

ՀՈԴՎԱԾ 33. Վոչ պակաս, քան 25 ընտրող ունեցող նավերը, վորոնք ընտրությունների որը գտնվում են նավարկության մեջ, կարող են կազմել առանձին ընտրական շրջաններ, վորոնք մտնում են նավի գրանցված վայրի ընտրական ոկրուգների մեջ։

Ընտրությունների որը ճանապարհին գտնվող հեռավոր ուղևորության մարդատար գնացքներում կազմակերպվում են ընտրական շրջաններ՝ բյուլետեններն ընդունելու այն ընտրող ուղևորներից, վորոնք ունեն «քվեարկման իրավունքի վկայական»։

ԳԼՈՒԽ V

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 34. ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմվում է հասարակական կազմակերպությունների և աշխատավորների ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում է ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից՝ ընտրությունների որվա հրապարակման հետ միաժամանակ։

ՀՈԴՎԱԾ 35. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմվում է նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 12 անդամից։

ՀՈԴՎԱԾ 36. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝

ա) ՌԽՖՍՀ ամբողջ տերիտորիայում ընտրությունների ընթացքում հետևում է «ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրության» անշեղ կատարմանը.

բ) քննարկում է ընտրական հանձնաժողովների սխալ գործողությունների վերաբերյալ գանգատները և գանգատների առթիվ վերջնական վճիռներ է կայացնում.

գ) սահմանում է կնիքների, ընտրական արկղների նմուշները, «քվեարկման իրավունքի վկայականի» ձևը,

ընտրական բյուլետենների և նրանց ծրարների ձևն ու գույնը, ընտրողների ցուցակի ձևը, ձայները հաշվելու արձանագրությունների ձևը, ընտրված լինելու վկայականների ձևը.

դ) ցուցակագրում է ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի մեջ ընտրված պատգամավորներին.

յե) ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի մանդատային հանձնաժողովին է հանձնում ընտրություններին վերաբերող գործավարությունը։

ՀՈԴՎԱԾ 37. ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների յուրաքանչյուր ընտրական okրուգում ստեղծվում է ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների okրուգային ընտրական հանձնաժողով։

ՀՈԴՎԱԾ 38. ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Okրուգային ընտրական հանձնաժողովները կազմվում են հասարակական կազմակերպությունների և աշխատավորների ընկերությունների ներկայացուցիչներից ու հաստատվում են ԻԽՍՀ Գերագույն Խորհուրդների Նախագահությունների կողմից, յերկրամասերի, մարզերի, ինքնավար մարզերի և ազգային okրուգների աշխատավորների պատգամավորների Խորհուրդների կողմից վոչ ուշ, քան ընտրություններից 55 որ առաջ։

ՀՈԴՎԱԾ 39. ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների okրուգային ընտրական հանձնաժողովը կազմվում է նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 8 անդամից։

ՀՈԴՎԱԾ 40. ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների okրուգային հանձնաժողովը.

ա) հսկում է, վորպեսզի աշխատավորների պատգամավորների Խորհուրդների համապատասխան գործադիր կոմիտեները ժամանակին կազմակերպեն ընտրական շրջանները.

բ) սահմանում է ընտրական շրջանների համարներն ըստ կարգի.

գ) հսկում է, վորպեսզի ժամանակին կազմվեն և ընդհանուրի գիտությանը հասցվեն ընտրողների ցուցակները.

դ) գրանցում է ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի առաջադրված պատգամավորության թեկնածուներին, պահպանելով ՌԽՖՍՀ Սահմանադրության և «ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Կանոնադրության» պահանջները.

յե) շրջանային ընտրական հանձնաժողովներին մատակարարում է ընտրական բյուլետեններ և ծրարներ սահմանված ձևով.

զ) կատարում է ձայների հաշվառում և պարզում է ընտրությունների արդյունքներն okրուգում.

ը) կենտրոնական ընտրական հանձնաժողովին է ներկայացնում ընտրություններին վերաբերող գործավարությունը.

թ) ընտրված պատգամավորին տալիս է վկայական ընտրվելու մասին։

ՀՈԴՎԱԾ 41. Շրջանային ընտրական հանձնաժողովները կազմվում են հասարակական կազմակերպությունների և աշխատավորների ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում են քաղաքներում աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհուրդների կողմից, իսկ ռայոնական բաժանումներ ունեցող քաղաքներում՝ աշխատավորների ռայոնական Խորհուրդների կողմից. գյուղական վայրերում՝ աշխատավորների պատգամավորների ռայոնական Խորհուրդների կողմից վոչ ուշ, քան ընտրություններից 40 որ առաջ։

ՀՈԴՎԱԾ 42. Շրջանային ընտրական հանձնաժողովը կազմվում է նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 2—6 անդամից։

ՀՈԴՎԱԾ 43. Շրջանային ընտրական հանձնաժողովը՝

ա) ընտրական շրջանում կատարում է ընտրական բյուլետենների ընդունումը.

բ) կատարում է ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության յուրաքանչյուր թեկնածուի համար տրված ձայների հաշվառումը.

գ) ընտրությունների գործավարությունը հանձնում է Okրուգային ընտրական հանձնաժողովին։

ՀՈԴՎԱԾ 44. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Ոկրուգային և Շրջանային ընտրական հանձնաժողովների նիստերը համարվում են որինական, յեթե նրանց մասնակցում է հանձնաժողովների կազմի կեսից ավելին։

ՀՈԴՎԱԾ 45. Ընտրական հանձնաժողովներում բոլոր հարցերը վճռվում են ձայների հասարակ մեծամասնությամբ. ձայների հավասարության դեպքում — նախագահի ձայնը տալիս է վերակշռություն։

ՀՈԴՎԱԾ 46. ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների կատարման հետ կապված ծախսերը կատարվում են պետության հաշվին։

ՀՈԴՎԱԾ 47. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, Ոկրուգային և Շրջանային ընտրական հանձնաժողովներն ունեն իրենց կնիքը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ձևով։

ԳԼՈՒԽ VI

ՌԽՖՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ՀՈԴՎԱԾ 48. ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի թեկնածուներ առաջադրելու իրավունքը, ՌԽՖՍՀ Սահմանադրության 146-րդ հոդվածի հիման վրա, վերապահվում է հասարակական կազմակերպություններին և աշխատավորների ընկերություններին — կոմունիստական կուսակցական կազմակերպություններին, պրոֆեսիոնալ միություններին, կոոպերատիվներին, յերիտասարդության կազմակերպություններին, կուլտուրական ընկերություններին և ուրիշ կազմակերպություններին, վորոնք գրանցված են որենքի սահմանած կարգով։

ՀՈԴՎԱԾ 49. Թեկնածուներ առաջադրելու իրավունքն իրագործում են ինչպես հասարակական կազմակերպությունների և աշխատավորների ընկերությունների կենտրոնական որգանները, այնպես եվ նրանց հանրապետական, յերկրային, մարզային և ռայոնական որգանները, ինչպես նաև բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովները՝ ձեռնարկություններում, կարմիր բանակայիններինը՝ զորամասերում, ինչպես նաև գյուղացիների ընդհանուր ժողովները՝ կոլխոզներում, սովխոզների բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովները՝ սովխոզներում։

ՀՈԴՎԱԾ 50. Պատգամավորության թեկնածուները չեն կարող լինել ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովների, ինչպես նաև այն ոկրուգի Շրջանային ընտրական հանձնաժողովների անդամներ, վորտեղ նրանք առաջադրված են վորպես պատգամավորության թեկնածուներ։

ՀՈԴՎԱԾ 51. Վոչ ուշ, քան ընտրություններից 30 որ առաջ բոլոր հասարակական կազմակերպությունները կամ աշխատավորների ընկերությունները, վորոնք առաջադրում են ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության թեկնածուներ, պարտավոր են պատգամավորության թեկնածուներին գրանցել ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների համապատասխան Ոկրուգային ընտրական հանձնաժողովում։

ՀՈԴՎԱԾ 52. ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովները պարտավոր են գրանցել ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության բոլոր թեկնածուներին, վորոնց առաջադրել են հասարակական կազմակերպությունները և աշխատավորների ընկերությունները, պահպանելով ՌԽՖՍՀ Սահմանադրության պահանջները և «ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Կանոնադրությունը»։

ՀՈԴՎԱԾ 53. Այն հասարակական կազմակերպությունը կամ աշխատավորների ընկերությունը, վորը ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության համար առաջադրում է թեկնածու, պարտավոր է Ոկրուգային ընտրական հանձնաժողովին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

ա) պատգամավորության համար թեկնածու առաջադրող ժողովի կամ նիստի արձանագրությունը, ստորագրված Նախագահության անդամների կողմից՝ ցույց տալով նրանց տարիքը, բնակության վայրը, թեկնածու առաջադրող կազմակերպության անունը, մատնանշելով պատգա-

ժողովրդության թեկնածուն առաջադրող ժողովի կամ նիստի տեղը, ժամանակը և մասնակիցների թիվը, ըստ վերջում արձանագրության մեջ պետք է ցույց տալ պատգամավորության թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը, նրա տարիքը, բնակավայրը, կուսակցականությունը, զբաղմունքը.

բ) պատգամավորության թեկնածուի դիմումը, որ նա համաձայն է քվեարկվելու նրան առաջադրող կազմակերպության կողմից տվյալ ընտրական okրուգում։

ՀՈԴՎԱԾ 54. ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության թեկնածուն կարող է քվեարկվել միայն մի okրուգում։

ՀՈԴՎԱԾ 55. ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Okրուգային ընտրական հանձնաժողովի հրաժարումը պատգամավորության թեկնածուին գրանցելուց, կարելի է բողոքարկել յերկու որվա ժամկետում կենտրոնական ընտրական հանձնաժողովին, որի վորոշումը վերջնական է։

ՀՈԴՎԱԾ 56. ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության գրանցված յուրաքանչյուր թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը, տարիքը, զբաղմունքը, կուսակցականությունը և թեկնածուին առաջադրող հասարակական կազմակերպության անունը հրապարակվում են Okրուգային ընտրական հանձնաժողովի կողմից վոչ ուշ, քան ընտրություններից 25 որ առաջ։

ՀՈԴՎԱԾ 57. ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության բոլոր գրանցված թեկնածուները պարտադիր կերպով պետք է մտցվեն ընտրական բյուլետենի մեջ։

ՀՈԴՎԱԾ 58. ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Okրուգային ընտրական հանձնաժողովները պարտավոր են վոչ ուշ, քան ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրություններից 15 որ առաջ տպել ընտրական բյուլետենները և ուղարկել բոլոր Շրջանային ընտրական հանձնաժողովներին։

ՀՈԴՎԱԾ 59. Ընտրական բյուլետենները տպվում են համապատասխան ընտրական okրուգի բնակչության լեզուներով։

ՀՈԴՎԱԾ 60. Ընտրական բյուլետենները տպվում են կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ձևով և այն քանակությամբ, որ ապահովվի ընտրական բյուլետենների մատակարարումը բոլոր ընտրողներին։

ՀՈԴՎԱԾ 61. Յուրաքանչյուր կազմակերպության, որն առաջադրել է Okրուգային ընտրական հանձնաժողովում գրանցված թեկնածու, ինչպես նաև ՌԽՖՍՀ յուրաքանչյուր քաղաքացուն իրավունք է ապահովվում անարգել կերպով ագիտացիա անել այդ թեկնածուի համար ժողովներում, մամուլում և այլ ձևերով՝ համաձայն ՌԽՖՍՀ Սահմանադրության 129-րդ հոդվածի։

ԳԼՈՒԽ VII

ՔՎԵԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

ՀՈԴՎԱԾ 62. ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունները կատարվում են մի որվա ընթացքում, որն ընդհանուր է ամբողջ ՌԽՖՍՀ համար։

ՀՈԴՎԱԾ 63. ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների որը սահմանվում է ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից վոչ ուշ, քան ընտրությունների ժամկետից 2 ամիս առաջ։ Ընտրությունները կատարվում են վոչ աշխատանքային որում։

ՀՈԴՎԱԾ 64. Շրջանային ընտրական հանձնաժողովը ընտրություններից առաջ վերջին 20 որերի ընթացքում ամեն որ հրապարակում է կամ վորևե այլ միջոցով լայնորեն հայտարարում է ընտրողներին ընտրությունների որը և ընտրությունների տեղը։

ՀՈԴՎԱԾ 65. Ընտրողներն իրենց ձայնը տալիս են ընտրությունների որը առավոտյան ժամը 6-ից մինչև գիշերվա ժամը 12-ը տեղական ժամանակով։

ՀՈԴՎԱԾ 66. Ընտրությունների որը, առավոտյան ժամը 6-ից, Շրջանային ընտրական հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի անդամների ներկայությամբ, ստուգում է քվեատուփերը և սահմանված ձևով կազմած ընտրողների ցուցակի առկայությունը, որից հետո փակում

և կնքում է տուփերը հանձնաժողովի կնիքով և հրավիրում է ընտրողներին սկսելու ձայներ տալը։

ՀՈԴՎԱԾ 67. Յուրաքանչյուր ընտրող քվեարկում է անձամբ, դրա համար ներկայանալով քվեարկության համար հատկացված շենքը, ըստ վորում ընտրողներն իրենց ձայները տալիս են՝ ընտրական տուփի մեջ ծրարներում ներփակված ընտրական բյուլետենները գցելու միջոցով։

ՀՈԴՎԱԾ 68. Ընտրությունների համար հատկացված շենքում առանձնացվում է հատուկ սենյակ՝ բյուլետենները լրացնելու համար, վորտեղ քվեարկության ժամանակ արգելվում է վորևե մեկի ներկայությունը, այդ թվում նաև Շրջանային ընտրական հանձնաժողովի անդամներինը, բացի քվեարկողներից. բյուլետենները լրացնելու համար մի քանի ընտրողներ միաժամանակ սենյակ ներս թողնելու դեպքում, սենյակը պետք է սարքավորված լինի միջնորմներով կամ վարագույրներով՝ միաժամանակ ներս թողած ընտրողների թվի համեմատ։

ՀՈԴՎԱԾ 69. Մտնելով ընտրական շենքը, ընտրողը Շրջանային ընտրական հանձնաժողովի քարտուղարին կամ անդամին ներկայացնում է կամ պասպորտը, կամ կոլխոզային գրքույկը, կամ պրոֆմիութենական տոմսը, կամ այլ անձնավկայական և ընտրողների ցուցակով ստուգվելուց ու ընտրողների ցուցակում նշանակվելուց հետո, ստանում է սահմանված ձևի ընտրական բյուլետեն ու ծրար։

ՀՈԴՎԱԾ 70. Ընտրությունների համար «քվեարկման իրավունքի վկայականով» շենքում ներկայացած անձանց վերաբերմամբ, համաձայն սույն «ՌՍՖՍՀ Գերագույն Սովհրդի ընտրությունների Կանոնադրության» 16-րդ հոդվածին, Շրջանային ընտրական հանձնաժողովը կազմում է հատուկ ցուցակ, վորը կցվում է ընտրողների ցուցակին։

ՀՈԴՎԱԾ 71. Ընտրական բյուլետենները լրացնելու համար հատկացված սենյակում ընտրողն ընտրական յուրաքանչյուր բյուլետենում թողնում է այն թեկնածուի ազգանունը, վորի համար քվեարկում է, ջնջելով մյուսներինը. ներփակելով բյուլետենները ծրարի մեջ և կպցնելով այն, ընտրողն անցնում է այն սենյակը, վորտեղ գտնվում է Շրջանային ընտրական հանձնաժողովը, և ընտրական բյուլետեն պարունակող ծրարը գցում է ընտրական արկղը։

ՀՈԴՎԱԾ 72. Այն ընտրողները, վորոնք անգրագիտության կամ ֆիզիկական վորևե թերության պատճառով հնարավորություն չունեն ինքնուրույն կերպով լրացնելու ընտրական բյուլետենը, իրավունք ունեն ընտրական բյուլետենները լրացնելու սենյակը հրավիրել իրենց ցանկացած ուրիշ ընտրողի՝ ընտրական բյուլետենը լրացնելու համար։

ՀՈԴՎԱԾ 73. Ձայն տալու ժամանակ ընտրական շենքում ընտրական ագիտացիա թույլ չի տրվում։

ՀՈԴՎԱԾ 74. Ընտրական շենքում կարգապահության համար պատասխանատվություն է կրում հանձնաժողովի նախագահը, և նրա կարգադրությունները բոլոր ներկա գտնվողների համար պարտադիր են։

ՀՈԴՎԱԾ 75. Ընտրությունների որվա գիշերը ժամը 12-ին, Շրջանային ընտրական հանձնաժողովի նախագահը ձայն տալը հայտարարում է ավարտված, և հանձնաժողովը սկսում է բաց անել ընտրական արկղները։

ԳԼՈՒԽ VIII

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

35506
41

ՀՈԴՎԱԾ 76. Այն շենքում, վորտեղ Շրջանային ընտրական հանձնաժողովը հաշվում է ձայները, հաշվառման ժամանակ իրավունք ունեն ներկա լինելու հասարակական կազմակերպությունների և աշխատավորների ընկերությունների հատկապես այդ բանի համար լիազորված ներկայացուցիչները, ինչպես նաև մամուլի ներկայացուցիչները։

ՀՈԴՎԱԾ 77. Շրջանային ընտրական հանձնաժողովը, բաց անելով արկղները, ստուգում է տրված ծրարների թիվը քվեարկությանը մասնակցող մարդկանց թվի հետ և ստուգման արդյունքները մտցնում է արձանագրության մեջ։

ՀՈԴՎԱԾ 78. Շրջանային ընտրական հանձնաժողովի նախագահը բաց է անում ծրարները և Շրջանային ընտրա-

ԱՍՍՀ ԱԵՐՈՍԻՆ ՓՐԱԿԱՐԱՆ
ՀԱՅԱՍ-ՊՐ
Մ. Մաշտոցի անվան

կան հանձնաժողովի բոլոր անդամների ներկայությամբ կարդում է քվեարկման արդյունքները, ըստ յուրաքանչյուր բյուլետենի։

ՀՈԴՎԱԾ 79. Պատգամավորության յուրաքանչյուր թեկնածուի համար կազմվում է յերկու որինակ հաշվեթերթիկ՝ հանձնաժողովի քարտուղարի և այդ բանի համար լիազորված Շրջանային ընտրական հանձնաժողովի անդամների կողմից։

ՀՈԴՎԱԾ 80. Անվավեր են համարվում.

ա) չսահմանված ձևի և գույնի բյուլետենները.

բ) առանց ծրարի կամ վոչ սահմանված ձևի ծրարով տրված բյուլետենները.

գ) այն բյուլետենները, վորոնք պարունակում են ընտրվելիք պատգամավորների թվից ավելի թեկնածուներ։

ՀՈԴՎԱԾ 81. Ընտրական բյուլետենի վավերական լինելու մասին կասկած ծագելու դեպքում հարցը լուծում է Շրջանային ընտրական հանձնաժողովը քվեարկությամբ, վորը նշվում է արձանագրության մեջ։

ՀՈԴՎԱԾ 82. Շրջանային ընտրական հանձնաժողովը, սահմանված ձևով կազմում է քվեարկման յերկու որինակ արձանագրություն, վոր ստորագրում են Շրջանային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները, վորոնց թվում անպայման նախագահը և քարտուղարը։

ՀՈԴՎԱԾ 83. Քվեարկման արձանագրության մեջ Շրջանային ընտրական հանձնաժողովը պետք է ցույց տա՝

ա) ձայն տալու ժամանակի սկիզբը և վերջը.

բ) ընտրողների ցուցակի համաձայն ձայն տված ընտրողների թիվը.

գ) «քվեարկման իրավունքի վկայականներով» ձայն տված ընտրողների թիվը.

դ) տրված ծրարների թիվը.

յե) Շրջանային ընտրական հանձնաժողովին տրված դիմումների և գանգատների համառոտ բովանդակությունը և Շրջանային ընտրական հանձնաժողովի ընդունած վորոշումները.

զ) ձայները հաշվելու արդյունքներն ըստ յուրաքանչյուր թեկնածուի։

ՀՈԴՎԱԾ 84. Ձայների հաշվելն ավարտելուց և արձանագրությունը կազմելուց հետո, հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեարկման արդյունքները հանձնաժողովի բոլոր անդամների ներկայությամբ։

ՀՈԴՎԱԾ 85. Շրջանային ընտրական հանձնաժողովի կազմած քվեարկման արձանագրության մի որինակը, ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության թեկնածուների հաշվեթերթիկների յերկու որինակի հետ միասին, սուրհանդակի միջոցով, 24 ժամվա ընթացքում, ուղարկվում է ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովին։

ՀՈԴՎԱԾ 86. Բոլոր ընտրական բյուլետենները (վավերական և անվավեր ճանաչվածներն առանձին-առանձին), պետք է կնքվեն Շրջանային ընտրական հանձնաժողովի կնիքով և քվեարկության արձանագրության յերկրորդ որինակի ու կնիքի հետ միասին Շրջանային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից հանձնվեն պահպանելու՝ քաղաքներում—աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհուրդներին, իսկ ռայոնների բաժանված քաղաքներում—աշխատավորների պատգամավորների ռայոնական Խորհուրդներին, գյուղական վայրերում—աշխատավորների պատգամավորների ռայոնական Խորհուրդներին։

ՀՈԴՎԱԾ 87. Աշխատավորների պատգամավորների Խորհուրդների վրա պարտականություն է դրվում պահպանելու ընտրական բյուլետենները, մինչև համապատասխան ոկրուգի պատգամավորների մանդատները հաստատվեն ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի կողմից։

ՀՈԴՎԱԾ 88. Ոկրուգային ընտրական հանձնաժողովը ձայները հաշվում է Շրջանային ընտրական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա։

ՀՈԴՎԱԾ 89. Այն շենքում, վորտեղ Ոկրուգային ընտրական հանձնաժողովը կատարում է ձայների հաշվառումը, իրավունք ունեն ներկա լինելու հաշվառմանը հասարակական կազմակերպությունների և աշխատավորների ընկերու-

թյունների հատկապես դրա համար լիազորված ներկայացուցիչները, ինչպես նաև մամուլի ներկայացուցիչները։

ՀՈԴՎԱԾ 90. Յուրաքանչյուր թեկնածուի համար Ոկրուգային ընտրական հանձնաժողովը կազմում է յերկու օրինակ հաշվեթերթիկ, վորտեղ նշվում է պատգամավորության յուրաքանչյուր թեկնածուի ստացած ձայների թիվը։

ՀՈԴՎԱԾ 91. Ոկրուգային ընտրական հանձնաժողովը կազմում է քվեարկման յերկու օրինակ արձանագրություն, վորն ստորագրում են Ոկրուգային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները, վորոնց թվում անպայման նախագահը և քարտուղարը։

ՀՈԴՎԱԾ 92. Ոկրուգային ընտրական հանձնաժողովի արձանագրության մեջ պետք է նշված լինի.

ա) ոկրուգի ընտրողների ընդհանուր թիվը.

բ) քվեարկմանը մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը.

գ) ձայների թիվը, վորոնք տրված են պատգամավորության յուրաքանչյուր թեկնածուի համար.

դ) Ոկրուգային ընտրական հանձնաժողովին տրված դիմումների և գանգատների համառոտ շարադրությունը և Ոկրուգային ընտրական հանձնաժողովի ընդունած վորոշումները։

ՀՈԴՎԱԾ 93. Ձայների հաշվառումից վոչ ուշ, քան 24 ժամ հետո ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովի նախագահն արձանագրության առաջին օրինակը, հաշվեթերթիկների հետ միասին, կնքված, սուրհանդակի միջոցով պարտավոր է ուղարկել Կենտրոնական ընտրական հանձնաժողովին։

ՀՈԴՎԱԾ 94. ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության թեկնածուն, վորն ստացել է ձայների բացարձակ մեծամասնություն, այսինքն՝ ոկրուգում տրված և վավերական ճանաչված բոլոր ձայների կեսից ավելին, համարվում է ընտրված։

ՀՈԴՎԱԾ 95. Արձանագրությունն ստորագրելուց հետո ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովի նախագահը հայտարարում է ընտրությունների արդյունքները և ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավոր ընտրված թեկնածուին վկայական է տալիս ընտրված լինելու մասին։

ՀՈԴՎԱԾ 96. Յեթե թեկնածուներից վոչ մեկը չի ստացել ձայների բացարձակ մեծամասնություն, համապատասխան Ոկրուգային ընտրական հանձնաժողովն այդ մասին հատուկ նշում է արձանագրության մեջ և հաղորդում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին և միաժամանակ հայտարարում է ամենաշատ ձայներ ստացած յերկու թեկնածուների վերաքվեարկումը, ինչպես նաև նշանակում է վերաքվեարկման որը վոչ ուշ, քան յերկու շաբաթվա ժամկետում ընտրությունների առաջին շրջանը լրանալուց հետո։

ՀՈԴՎԱԾ 97. Յեթե ոկրուգում տրված ձայների քանակն այդ ոկրուգում քվեարկելու իրավունք ունեցող ընտրողների կեսից քիչ է, ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովն այդ մասին հատկապես նշում է արձանագրության մեջ և անհապաղ հայտնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, ըստ վորում այդ դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովն առաջին ընտրություններից հետո վոչ ուշ, քան յերկու շաբաթվա ժամկետում նշանակում է նոր ընտրություններ։

ՀՈԴՎԱԾ 98. Պատգամավորության թեկնածուների վերաքվեարկումը, ինչպես նաև անվավեր ճանաչված ընտրությունների փոխարեն, նոր ընտրությունները տեղի յեն ունենում առաջին ընտրությունների համար կազմված ընտրողների ցուցակներով և ամբողջովին համապատասխանում «ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Կանոնադրության»։

ՀՈԴՎԱԾ 99. ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի կազմից պատգամավորի դուրս գալու դեպքում ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությունը յերկշաբաթյա ժամկետում նշանակում է համապատասխան ընտրական ոկրուգում նոր պատգամավորի ընտրության ժամկետը, բայց վոչ ուշ, քան

ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի կազմից պատգամավորը դուրս գալուց յերկու ամիս հետո։

ՀՈԴՎԱԾ 100. Յուրաքանչյուր վոք, ով բռնության, խաբեբայության, սպառնալիքի կամ կաշառքի միջոցով խոչընդոտ կհանդիսանա ՌԽՖՍՀ քաղաքացուն՝ ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավոր ընտրելու և ընտրվելու նրա իրավունքն իրականացնելու գործում, պատժվում է ազատազրկմամբ մինչև յերկու տարի ժամանակով։

ՀՈԴՎԱԾ 101. Խորհրդի պաշտոնատար անձը կամ ընտրական հանձնաժողովի անդամը, վորը կեղծել է ընտրական փաստաթղթերը կամ դիտավորյալ կերպով ձայները սխալ է հաշվել, պատժվում է ազատազրկմամբ մինչև 3 տարի ժամանակով։

Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

Ի. տ. Համառուսական Կենտրոնական Գործադիր
Կոմիտեյի քարտուղարի Համառուսական Կենտգործկոմի
Նախագահության անդամ՝ Ա. ԱՐՏՅՈՒԽԻՆԱ

Մոսկվա, Կրեմլ 1938 թվի փետրվարի 16

Հանրային գրադարան
ՀՍՍՀ-ССРА
Մ. Գ. Մաշտոցի անվան

Ответ. редактор *Чатыньян П. А.*
Техред. *Жданович Л. М.* Корректор *Кеворкьян М.*

Издание № 12/38. Сдано в набор 26 февраля 1938 г., подписано в печать 10 марта 1938 г. Формат 44x62/8. Объем 1 1/2 п. л. Тираж 11.000

Уполобллит № И—753. Типография Обл. армянского издательства „Большевик" (Ростов-Дон, Ворошиловский пр. 27). Заказ № 458

«Ազգային գրադարան»
NL0200701

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.
Цена 20 коп.

225

Положение о выборах в Верховный Совет РСФСР

(На армянском языке)

РОСТОВСКОЕ ОБЛАСТНОЕ
АРМЯНСКОЕ ИЗДАТЕЛЬСТВО
„БОЛЬШЕВИК“
Ростов-Д., Ворошиловский пр., 27